



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«14» մայիսի 2019թ.

N 112-Ս

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՑԱՆԿԸ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 9 ՀՐԱՄԱՆՆ
ՈՒԺԸ ԿԱՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 90 որոշմամբ հաստատված հավելված 1-ի 14-րդ կետի 14-րդ ենթակետը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել.

1) Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության խորհրդատուների անվանական ցանկը ըստ մասնագիտությունների՝ համաձայն N1 հավելվածի.

2) Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության խորհրդատուների աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունվարի 30-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության արտահաստիքային գլխավոր մասնագետների կազմը ու աշխատակարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության 2009 թվականի ապրիլի 29-ի թիվ 67 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 9 հրամանը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա.ԲԱՂՅԱՆ

Ց Ա Ն Կ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

1. Վարդան Իշխանի Ղուկասյան– ԱՀ ԱՆ խորհրդատու Ընդհանուր վիրաբուժության գծով
2. Լյուդմիլա Լևոնի Գրիգորյան - ԱՀ ԱՆ խորհրդատու Ներքին հիվանդությունների գծով (թերապիա)
3. Կարինե Աշոտի Թարխանյան– ԱՀ ԱՆ խորհրդատու Մանկաբուժության գծով
4. Մանուշակ Ալեքսանդրի Սարգսյան - ԱՀ ԱՆ խորհրդատու Մանկաբարձության և գինեկոլոգիայի գծով
5. Ինեսա Միքայելի Ադամյան - ԱՀ ԱՆ խորհրդատու Սրտաբանության գծով
6. Սրբուհի Ռոմիկի Բաղդասարյան - ԱՀ ԱՆ խորհրդատու Նյարդաբանության գծով
7. Ռուզաննա Փարավոնի Ադամյան - ԱՀ ԱՆ խորհրդատու Ակնաբանության գծով
8. Մարատ Արարատի Դանիելյան - ԱՀ ԱՆ խորհրդատու Ներզատաբանության գծով
9. Արմեն Ռոբերտի Խաչատուրյան - ԱՀ ԱՆ խորհրդատու Մանկական վիրաբուժության գծով
10. Արմեն Արտյուշայի Հայրիյան - ԱՀ ԱՆ խորհրդատու Ուռուցքաբանության գծով :

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆՆԵՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) խորհրդատուի (այսուհետ՝ խորհրդատու) պաշտոնում նշանակվում է բարձրորակ բժիշկ-մասնագետ, որն ունի տեսական և գործնական բարձր պատրաստականություն իր մասնագիտության գծով, տիրապետում է հարակից ծառայությունների խորը գիտելիքներին, ակտիվ մասնակցում է գիտական և գործնական աշխատանքներին, իր մասնագիտությամբ ավագ և միջին բուժանձնակազմի պատրաստման և որակավորման գործընթացին:

2. Խորհրդատուն նշանակվում և ազատվում է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից և հանդիսանում է նախարարության խորհրդատուն իր մասնագիտության գծով:

3. Խորհրդատուի հիմնական խնդիրներն են՝ բնակչության առողջության ամրապնդմանը, հաշմանդամության և մահացության իջեցման նպատակով հիվանդությունների կանխարգելմանը, բուժկանխարգելիչ հիմնարկների աշխատանքային գործունեությունում հիվանդությունների ախտորոշման և բուժման նորագույն մեթոդների ներդրմանն ուղղված միջոցառումների մշակումը և իրականացումը:

4. Խորհրդատուն իր աշխատանքային գործունեության ընթացքում առաջնորդվում է Արցախի Հանրապետության սահմանադրությամբ, օրենքներով, կառավարության որոշումներով, առողջապահության նախարարի հրամաններով և այլ իրավական ակտերով:

5. Խորհրդատուն աշխատում է նախարարության կողմից հաստատված տարեկան աշխատանքային պլանով:

II. ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պլանավորել ու իրականացնել կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ՝ ներգրավելով շահագրգիռ մարմինների ներկայացուցիչներին:

2. Առաջարկություններ ներկայացնել իր մասնագիտության գծով համապատասխան բժշկական ուղղությունների կատարելագործման վերաբերյալ՝ ղեկավարվելով բժշկական տեխնոլոգիաների, հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման և բուժման մեթոդների, հիվանդների վերականգնողական բուժման բնագավառներում առաջատար փորձի ուսումնասիրություններով:

3. Մասնակցել մասնագետների ատեստավորման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին:

4. Ցուցաբերել գործնական, բուժական ախտորոշիչ և խորհրդատվական օգնություն.

1) նախարարության, ինչպես նաև շրջանային հիվանդանոցների կողմից ուղեգրված հիվանդներին.

2) այլ քաղաքային բուժման նպատակով հիվանդների ճիշտ ընտրություն կատարելու հարցում.

3) համապատասխան մասնագետներին՝ հիվանդների ճիշտ վարման հարցում:

5. Պարբերաբար կատարել արտագնա խորհրդատվություններ տեղերում:

6. Մասնակցել՝

1) պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ծրագրերի, ինչպես նաև հիվանդությունների ախտորոշման, բուժման ուղեցույցների մշակմանը.

2) պետության կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղորայքի ցանկի ու պահանջարկի կազմման աշխատանքներին.

3) ոլորտի զարգացմանն ուղղված ռազմավարական փաստաթղթերի, ծրագրերի, գործելակարգերի, ուղեցույցների, ընթացակարգերի և այլ իրավական ակտերի մշակմանը, լրամշակմանը, տեղայնացմանը.

4) ախտորոշման և բուժման հարցերով քաղաքացիների դիմումների քննարկմանը.

5) բուժկանխարգելիչ հիմնարկների աշխատանքների կազմակերպմանը.

6) մասնագետների պատրաստման և վերապատրաստման ծրագրերի մշակմանը:

7. Մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը Արցախի Հանրապետության առողջապահության նախարարին ներկայացնել եռամսյակային գրավոր հաշվետվություն կատարված աշխատանքների մասին, իսկ մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 25-ը՝ նախորդ տարվա ամփոփ հաշվետվություն ծառայության արդի վիճակի վերաբերյալ և առաջարկություններ դրա զարգացման ուղղությամբ:

8. Մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 25-ը Արցախի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացնել հաջորդող եռամսյակում կատարվելիք աշխատանքների մասին պլան:

III. ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Խորհրդատուն իրավունք ունի.

1) բուժկանխարգելիչ հիմնարկների ղեկավարներին իր մասնագիտության գծով տալ ցուցումներ (բանավոր կամ գրավոր) բնակչության բուժկանխարգելիչ սպասարկման գործի կազմակերպման և բարելավման հարցում՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով իր գլխավորած ծառայության նեղ մասնագետներին.

2) իր մասնագիտության գծով պատրաստել և առողջապահության նախարարությանը կից կոլեգիայի քննարկմանը ներկայացնել ծառայության արդի վիճակի, խնդիրների և զարգացման վերաբերյալ հարցեր.

3) իր մասնագիտության գծով մասնագիտացված բուժօգնության որակը բարձրացնելու հետ կապված հարցերը քննարկելու նպատակով կազմակերպել խորհրդակցություններ՝ հրավիրելով այլ մասնագետների.

4) պարբերաբար կազմակերպել սեմինարներ իր մասնագիտության գծով առաջնահերթ խնդիրների քննարկման նպատակով՝ անհրաժեշտության դեպքում հրավիրելով այլ խորհրդատուներին:

2. Խորհրդատուն պարբերաբար կատարելագործում է իր գիտելիքները, աշխատանքի ոճը և մեթոդները, բնակչության շրջանում ակտիվ քարոզչական աշխատանք է տանում բժշկագիտության և առողջապահության նվաճումների մասին:

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ